

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևալժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսագիտական վերլուծությունների բաժնի առաջատար մասնագետ (30-3.2-10)

Առաջատար մասնագետը՝

- Վարում է Նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառումը, կազմում եռամսյակային և տարեկան հաշվետվություններ,
- Կազմում է Նախարարության աշխատակազմի արտասահմանյան գործուղումներ, ՀՀ պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ ամսական հաշվետվությունները,
- Վարում է Նախարարության աշխատակազմի ստորաբաժանումների աշխատավարձի հաշվառումը ըստ դրամական միջոցների մուտքի և նախահաշվի նկատմամբ փաստացի ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև ստորաբաժանումների առհաշիվ տրված գումարների հաշվառումը և ավտոտրանսպորտի ծախսի փաստացի հաշվառումը ըստ դրամական միջոցների մուտքի փաստի և գործարքների կատարման փաստացի հաշվառումը,
- Մասնակցում է Նախարարության աշխատակազմի գույքագրման, փոխադարձ հաշիվների ստուգման, ընդունման-հանձնման գործընթացներին,
- իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- Տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտություններ գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- «Հաշվապահական հաշվառման մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- աշխատավարձի չափը՝ 150. 799 (հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննսուսինը) ՀՀ դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

Տվյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
- անձնագրի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
 - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
 - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացիներ փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 22.08.2018թ.